Ա Մ Ա Ն Ո Ր Ի Ա Ռ Թ Ի Վ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ Ա Զ Գ Ե Ն Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Ա Ռ Ո Ւ Շ Ա Ն Յ Ա Ն Ի Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ Ք Ո Ջ Ի Ն Յ Ա Ն Ի Ն

Ե Ր Ե Վ Ա Ն

Հայ եկեղեցու և Մեր անունից հաճեցեք ընդունել Մեր սրտագին շնորհավորանքները Նոր Տարվա առիթով:

Մաղթում ենք Ձեզ անձամբ և մեր բարեխնամ կառավարության բոլոր անդամներին քաջառողջություն և շինարար գործոց հաջողություն: Աղոթող ենք մեր ժողովրդի բարգավաճության և ամբողջ աշխարհի խաղաղության համար:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ Գ Ա Ս Պ Ա Ր Յ Ա Ն Ի Ն

Ե Ր Ե Վ Ա Ն

Նոր տարվա ուրախ առիթով հաճեցեք ընդունել Մեր ջերմ շնորհավորանքները և բարեմաղթությունները անձամբ Ձեզ և պատվարժան խորհրդի բոլոր անդամներին:

Աղոթում ենք, որ նոր տարին լինի երջանիկ, խաղաղ, նոր հաջողությունների տարի:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Վ Ա Զ Գ Ե Ն Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և իմ անունից շնորհակալություն եմ հայտնում նոր տարվա առթիվ Ձեր շնորհավորանքի և ամբողջ աշխարհում ժողովուրդների տևական խաղաղության բարեմաղթությունների համար:

Ջերմորեն շնորհավորելով Ձեր նոր տարին, ցանկանում եմ Ձեզ ևս քաջառողջություն և ուրախ տարի:

Շ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում նոր տարվա առթիվ Ձեր նրած շնորհավորանքի և բարեմաղթությունների համար, ջերմորեն շնորհավորելով Ձեր նոր տարին:

Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և երջանկություն:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ
ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Հանեցեք ընդունել Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի անդամների և անձամբ իմ ջերմ շնորհավորանքները նոր տարվա առթիվ:

Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն, խաղաղ ու երջանիկ տարի: Թող նոր տարին լինի Սովետական Միության և ամբողջ աշխարհի ժողովուրդների խաղաղության տարի, որի ամրապնդման համար Դուք ևս բերում եք Ձեր գնահատելի մասնակցությունը:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ